մենք կարող ենք ավելի ընդարձակել այս ցուցակը, մասամբ միայն նմանություն և բերում Դիարբեքիրի

Սասանյան արծաթի գործ. **Պատկեր 77.**

Որթոքիդների թողած մի և յերկու գլխանի արծիվներին և անմիջապես չի կապվում ծագմամբ նրանց հետ, այլ ավելի հնագույն ավանդների, ինչպես Ցախաց քարի որինակից տեսանք, կամ սասանյան արվեստին շատ մոտ մի արծաթյա անոթի նույն պատկերից մակաբերել կարելի յե, վոր ցուցադրում ենք այստեղ (պատկ. 76) *։

Այս տեսության նկատմամբ վոչինչ չե փոխում և Ինսբրուկի Ֆերդինանդեումի պղնձի սկուտեղը, վոր ըստ արձանագրության Կայֆայի և Խարբերդի տեր իրն Սուքման իրն Ուրթուք Դավուդի (1114—1144) պատվերով և շինված, և ի միջի այլոց ունի նաև Գիմբուսավոր արծիվ մագիլների մեջ կենդանի բռնած։ Բերխեմը արձանագրությունների հընդարական առանձնահատկություններից դատելով, կարծում է, վոր սկուտեղը վերոհիշյալ քաղաքների կամ Համիթի գործ չե, և մատնանշում է Migéon-ի հետ միջին ասիական կամ չինական շրջանները։ Սրանց հակառակ Strzygowski-ն հնարավոր և համարում նրա ծագումը տեղի հետ կապել, բայց



Պոոշյան վիմափոր ժամատան հարավային պատին, քանդակ. **Պատկեր 78.**

ոտար վարպետի գործ, վոր ոգտագործել է տեղական մոտիվները։ Ընդհանրապես այսպիսի պղինձի գործերի հայրենիքը, ինչպես և մոսուլականի, համարվում է Հայաստանը կամ պարսկահայկական սահմանները՝ Ասորիքն ու հյուսիսային Միջագետքը *։

Առյուծների մասին արդեն խոսք յեղավ մասամբ վերև. դրանք իրար դեմ, հանգիստ կամ կռվելիս, իրար կամ ուրիշ կենդանիների հետ, թևավոր և անթև, հավասարապես տեսնում ենք հայ և մահմեդական արվեստների մեջ։ Բայց այստեղ առանձնահատուկ է նրանց շղթայված դիրքը իրար հետ, ինչպես Պոոշյանների անմիջական հովանավորության տակ ծաղկած Գլաձորի դպրոցի նշանավոր մանրանկարիչ Դավիթ Տարոնեցու նկարն և Յեսայի Նչեցու Աստվածաշնչի մեջ (պատկ. 27. եջ 90), գեղարվեստական մի գործ, ավելի հնագույն՝ սասանյան և միջագետական՝ ավանդությունների պահպանությամբ, կամ առանց թևի այստեղ՝ Պոոշյան քանդակում, վիշապագլուխ պոչերով, յեթե ճիշտ է մեր դիտողությունը (սկզբնական որինակի մեջ բոլորովին պարզ չե այդ մասը), վոր դարձյալ արևելյան հին ա-

վանդներն է մատնանշում։ Ուրույն յերևույթ է նույնպես յեղան կամ նորա գլխի հետ շղթայված (պատկ. 12, 13 և 15. եջ 45, 46, 47) կերպը՝ արծվի վոտքերի տակ։ Արդեոք Պոոշյան և նրանց ստորադրյալ ավելի մանր իշխանությունների խմբակցությունն է պատկե-

---

* Я. И. Смирнов. Восточное Сер. պատկ. 88. 162. Ցերկգլխանի արծիվ մագիլների մեջ նապաստակ նաև հետիտյան արվեստի մեջ. Ed. Meyer. Kunst եկն. 28, վոր հետիտական պետության դինանշանն եր։

* Berchem—Strzygowski. Amida. 120 շ. և 268 շ. Migéon. Manuel d'Art Musulman. 165/6. Н. Марр, О Раскопках. в Ани. СП. 1907. 50.